ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 4 » ապրիլի 2017 թ

N 19

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Բագրավան

/094 / 82-41-78

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն, ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի թիվ 5,թիվ 6 –Ն, թիվ 7-Ա որոշումները:

Առդիր՝ << 3 >> թերթ:

Հարգանքներով՝

ԲԱԳՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3514-17
04 04 17թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N5

« 27 » մարտի 2017 թվական գյուղ Բագրավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի մարտի 1-ի թիվ 20 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1.945 և 0.8934 հեկտար արոտները /կադաստրային ծածկագրեր՝ 08-022-0201-0046, և 08-022-0201-0045/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման գործառնական նշանակության, տեղամասերում պեմզային տուֆ քարի արդյունահանման համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի գյուղական համայնքի ղեկավար Արտյոմ Պետրոսյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ կողմ ----------
ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆ կողմ ----------
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ կողմ ----------
ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ կողմ ----------

Բագրավան համայնքի ղեկավար՝ Արտյոմ Պետրոսյան

« 27» մարտի 2017 թվական

գյուղ Բագրավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 6-Ն

«27» Մարտի 2017 ԹՎԱԿԱՆ ԳՅՈՒՂ ԲԱԳՐԱՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի , << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի, << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 25-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Եկամտային մաս

1)Ընդամենը եկամուտների << 20199.7>> թիվը փոխարինել << 21199,7>> թվով :

ա.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասի տող1121 << Գույքահարկ փոխադրամիջոցների համար >> չորրորդ եռամսյակի << 1041.9 >> թիվը փոխարինել << 1141,9 >> թվով:

բ.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասի տող1112 << Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար >> չորրորդ եռամսյակի <<6843.0 >> թիվը փոխարինել <<7243.0 >> թվով:

գ.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային մասի տող1331 << Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ >> չորրորդ եռամսյակի <<1030.3 >> թիվը փոխարինել <<1530.3>> թվով:

2. Ծախսային մաս

1)Ընդամենը ծախսերի << 22470.8 >> թիվը փոխարինել << 23470,8 >> թվով :

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան համայնքի 2017 թվականի բյուջեի վարչական մասի << Համայնքների պահուստային ֆոնդ >> բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51<< Պահուստային միջոցներ >> 4891 հոդվածի չորրորդ եռամսյակի << 2223.4 >> թիվը փոխարինել <<3223,4 >> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆՈՒԱՆԴԱՄՆԵՐ Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Արմեն Պետրոսյան՝ կողմ
Արսեն Վարոսյան՝ կողմ
Գագիկ Գևորգյան՝ կողմ
Արկադի Գևորգյան կողմ

Բագրավան համայնքի ղեկավար՝ Ա. Պետրոսյան

<< 27 >> մարտի 2017 թվականի գյուղ Բագրավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 7-Ա

<< 27 >> մարտի 2017 թվական գյուղ Բագրավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՖԵՆՅԱ ՆԻԿՈՂՈՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավանի համայնքի բնակիչ՝ սոցիալապես անապահով Ֆենյա Նիկողոսի Ղազարյանին տրամադրել 50000 (հիսուն հազար) դրամ միանվագ դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Արմեն Պետրոսյան՝ կողմ .....

Արսեն Վարոսյան՝ կողմ .....

Արկադի Գևորգյան՝ կողմ .....

Գագիկ Գևորգյան՝ կողմ .....

Բագրավան համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

<< 27 >> մարտի 2017 թվական

գյուղ Բագրավան